## 79. ԾՈՒՄՈ

Կէլնէն իրեյ կնիյմ, ինոնց լաճմ կէլնի՝ Ծումո: Լաճու խերն էն գյեղի ռեսն ի: Օրմ գեղական կկանչի զյուբմնրա, որ ուրենց արտ քյաղեն:

Լաճուն կասի. - Տղա՛, կնա, ճաշ պե ուտեն:

Լաճ խոր կասի. - Կողիտ տմնակ տուր, տանեմ տամ մորս նշանապան, որ ավատա:

Խեր լաճուն կասի. - Մերտ կիտի մե սարայ կա, տյու կնա ուզե. էն կուտա:

- Չէ՛. չում տմնակ չիտաս. չեմ էրթմ:

Խեր տմնմկ կուտմ:

Կառնի կէրթմ, մոր կասի. - Մարե՛, մարե՛. էլի կով մորթենքյ, անենք ճաշ, տանենքյ սարայներաց:

Մեր կասի. - Աստծու սիրուն. մենքյ ենքյ էն մեյ կով, ինչի՞ էլնենք էն կով մորթենքյ, ի՞նչ գյմխ իփենքյ. ի՞նչ գյմխ խասուցենքյ:

Տղեն կասի. - Չէ՛, իլահ պիտի պիրենքյ մորթենքյ, չես ավատա, ահա խորս տմնմկ:

Կառնեն կով, կտնեն գյետին կմորթեն:

Տղեն որ կմնգյննա, սարայներ կմնան դաշտ անոթի: Աղի խետ կռիվ կանեն, կասեն. - Մենքյ անոթի ենք:

Աղեն կէլնի կուգյմ տուն, որ ճաշ տանի, կտիսնա, որ կով մորթեր են:

Կասի. - Հա՛յ, հավար, աստծու սիրուն էլնի, էտա ի՞նչ եք արե:

Կնիյն կասի. - Ի՞նչխ անեմ, վեր քո լաճուն չկարցա, տյու եիր տմնմկ տվե լաճուտ, ասե՝ տար, կով մորթի:

Իրիկ, կնիկ կիյնեն վեր կովուն խոսելու մեչ, լաճ կառնի մզմլին, կփախնի տնեն: Կվմգի, կէրթմ դաշտ. մո սարայներ: Սարայներաց կխապի, կասի. - Էլեյհ, մեր տեզ վառե՛քյ. խուժան կուգա մե կսպանե, տեզն էլ կվառի, ւգերեք մռմճ մենքյ վառենք:

Սարայներ կավատան ինոր խոսքին, կէլնեն տեզ կվառեն, կթռնեն, փախեն կէրթմն:

Տղեն կէյնի մեզմրմ իլին քյակոռ կշլկի, կէրթմ ուր մորքրոշ տուն: Մորքուր կասի. - Ցու՞ստ կուգմս, Ծումո:

Կասի. - Մորքյու՛ր. քյո քյոր քյե գյմտմ-վտխինդ ի ճմմխե:

Մորքյուր կէլնի մեզմր կաչկի, կտիսնա գյեոմշու ճեռչ-ճեռչ քյակոռներ:

Կասի. - Ծումո՛. մորքյուր մեռնի քյե, քյո գյառեն-փոխինդ էսա քյակո՞ռն ի:

- Մորքյու՛ր. ջա փոացի իտև ծեր տաՆ, Նեղացա, էկա պառկա մը խռվվՆեր. քյՆա, գյատեն խաՆիՆ. քյակոռ տրիՆ, փոխինդ խաՆիՆ՝ քյակոռ տրիՆ: Կապիցին տրին էՆ տեղ: Ես ի՞Նչ կիտի, ի՞Նչ իՆ տրե մեջ, առի պիրիցի ըստեղ:

- Ավատա՛, ավատա՛. մորքյուր մեռՆի քյե, Ծումն՛, էՆ թաժա մեռլՆեր ըսկուՆ կաՆիՆ. տյու ըՆչի՞ կուզյիր քյՆիր դա:

ԾումՆ քյաՆիմ շմայաթ կմՆա մը մորքյուր, մորքյրոջ կՆեղցուցի. մորքյուր կուզի Ծումոյին տՆեՆ տյուս խաՆի: ԾումՆ կիմՆա, որ ուր մորքյուր ուրմից աջզեր ի, կուզե տյուս խաՆի, որ ուր սիրող ռեսի լաճ խաՆգյիստ տաՆի-պիրի:

Մորքյուր Ծումոյին կեր. պմՆ չէր շիՆե. ցամաք խաց բիլե չէր տար. կասեր՝ բալքյի թողՆի էրթա:

ԾումՆ օրմ կէրթմ առտի պյուլեոր կաՆ կուզյա, մե խատ ճեռչ, բեռտ ծառ կկՆդՆի: Կուզյա տուՆ, մորքյրոջ կասի. - Մորքյու՛ր. մեր առտի գյլեոխ մեյ խատ արբետիկ ծառ կա, վով էրթմ դիլաքյ աՆի, իՆոր դիլաքյ կկատարվի, զեորավոր արբետիկմ ի:

Մորքյուր կէլՆի գյաստմ կթխի, փոխինդ կշաղաղի, կէլՆի որ էրթմ մոտ արբետիկ:

Ծումոյին կասի. - Ծումն՛, տյու տախտՆ ավելի, չում ես էրթմմ մը արբետիկ, տառՆամ:

Մորքյուր կէրթմ ուրիշ ճմմբով, լաճՆ կէլՆի ուրիշ կարճ ճմմբով կէրթմ. շուտ կմտՆի ծառի բեռտի մեջ:

Մորքյուր կէրթմ կՆստի բեռտի մոտ, կասի. - Ամա՛Ն, արբետիկ. մեռՆեմ քյե. ԾումՆ աՆես գյոտիկ-մոտիկ:

ԾումՆ բեռտի մեջեՆ կկաՆչի. - ԱմեՆ: Թմլ գյմ խացմ գյատա. թմլ գյմ գյլոխմ փոխինդ:

Մորքյուր մաղմ գյմտեՆ, գյլոխմ փոխինդ կթմլի բեռտի մեջ: ԾումՆ կուտի:

Կուզյմ տուՆ կտիսՆա, որ ԾումՆ մլմ տախտ չի ավիլե:

Կասի. - Ծումն՛, տյու ըՆչի՞ տախտ չես ավիլե:

Կասի. - Մորքյու՛ր, տյու կՆմցիր, ես էլա սպՆչյու, չկարցա տախտՆ ավիլի:

Մորքյուր մեջ ուր սրտիՆ ուրախցավ, ասաց. - Վալլա՛, ԾումՆ պիտի գյեոտաՆա:

Մեկ օր ետ ԾումՆ կխարցուցի. կասի. - Մորքյու՛ր, էլ չե՞ս էրթմ:

Մորքյուր կասի. - Ծումն՛, կէրթմմ, ապա կտմտրե՞մ:

ԾումՆ մորքյրոջ կասի. - Մորքյու՛ր, ի՞Նչ որ կուզի արբետիկ տու՛ր, ի՞Նչ որ դիլաքյ աՆես, կկատարվի:

ԷՆմեկ տիրՆ էլմ գյմտմ, փոխինդ կշիՆի, կառՆի կէրթմ մորքյուր:

ԾումՆ ուրիշ ճմմխով ջոտմ կէրթմ, կմտՆի մեջ բեռտիՆ:

Կասի. - ԱմաՆ արբետիկ, մուՆջ թմՌլմ. ԾումՆ մեռՆեր, էլ զադ չուզե, ՌՌա՛, - ԾումՆ բեռտի մեջեՆ կասի. - Ամե՛Ն, ԾումՆ կկուրՆա, կկուրՆա... Գյատեմ թմլ, ամե՛Ն, ԾումՆ կկուրՆա, ԾումՆ կկուրՆա: ԿՆա ծեր կով շիՆի կավուրմա, տու թող ուտի, ԾումՆ կկուրՆա:

ՄորքյուրՆ ի, կուզյմ տուՆ, կասի. - Ծումն, էլի մեր կով մորթեՆքյ:

ԾումՆ կասի. - Մորքյու՛ր, ափսոս չի՞, մեՆքյ եՆքյ էՆ մեկ կով, ի՞Նչխ կմորթես:

Մորքյուր կասի. - Ծումն՛, արփու խոստմուՆքյ ի, ի՞Նչ աՆեմ, պիտի մորթեմ:

ԿէլՆի պիրի կով կմորթի, կտՆի կավուրմա: ՕրեՆ իրեքյ տիր կավուրմով փլավ կիփի. կուտա ԾումՆ ուտի:

Ծումոն քանիմ օր ետ կասի. - Մորքյուր, իմ աչկեր բժեռտվեր ի:

Մորքյուր կբմշլայի օրեն չորս դիր կիրցուցել: Քյանիմ օր ետ Ծումոն կասի. - Մորքյուր. ես ջեորեով կտիսնամ:

Կավուրմեն պոծնելու օրին, վերճի քյասին, Ծումոն կբաշլայի քյասեն ափլփել:

Մորքյրոջ կասի. - Մորքյու՛ր, ես կուրցա սյոծա:

- Մորքյուր մեռնի քյե: Թայլմ չկուրնիր, շապթյուս մեծ ծավար կեր խաշելու:

Ծումոն կասի. - Մորքյուր, տյու ծավար խաշի, զի խան տիր տանիս, դնգյմ տուր իմ ծեռ, ծեռդիմ: Ես դնգյ թփեմ վեր տռան, մարթ չմտնի տուն, ծեռդին կծ-կծ անեմ, խավքյեր չիգյան վեր ծմվրին:

Մորքյուր Ծումոն կխանի տնի տանիս, դնգյ կուտա ծեռ, ծեռդին կտնի կուշտ:

Ծումոն, ծեղով կծ-կծ կանի խավքյեր՝ չիգյան մոտ, դնգյ կտփի վեր տռան՝ մարթ չմտնի տուն:

Մորքյուր կէլնի ջոեն կառնի, որ Էրթա ճրյու, որ ռեսի լաճն տիսնա:

Ռեսի լաճ կուգյա տուն, կմտնի ներս: Ծումոն աչկեր պլացե, ազատ կիրիշկի: Խետ ռեսի լաճ ներս կմտնի, Ծումոն դնգյ կթփի վեր ռեսի լաճու գլխուն:

Ռեսի լաճ ճամաև կիյնի էնտեղ կմեռնի: Ծումոն կուգյա կշլկի, կտանի տուն մո թոներ: Կտելմ Էրկու տայճ-տայճ ճաշ կլցի պերան, փեոշին կքյաշի վեր իրիսին, կծմծկի: Մորքյուր ճյուր կպիրի, կտիսնա, որ ռեսի լաճ իկե պառկե թորվան կուշտ:

Ռեսի լաճուն կասի. - Էլի վեր դե՛, չես քյնե՞ կիշեր, իկեր ես, պառկեր ես:

Ռեսի լաճ ծեն չի խանե: Կնիկ ոտներ կպռնի կքյաշի: Կուգյա փեոշին իրիսի վիրվեն կվերցի, կտիսնա, որ մեռուկ ի:

Կէրթա Ծումոյին կասի. - Ծումո՛, ռեսի լաճ իկե մեր տուն, ճաշ կիրե, պերան իրիցե, մեռե:

Կասի. - Մորքյու՛ր, տուր իմ շլակ, ես տանեմ թալեմ:

Կառնի շլայ կտանի, կտանի ուրիշ իգյու մեչ կտնգի վեր ծերնի ծառին: Իգյու տեր չկիտե ռեսի լաճն ի, չկիտե մեռուկ էլ ի: Քյարմ կեռլեոխնի: Քյար կտիպնի լաճուն, ռեսի լաճ կիյնի տակ:

Իգյու տերն կէրթա տիսնա, որ ռեսի լաճն գյետ մեռուկ ինգյե էնտին: Իգյու տերն էլ կիտե, թե ուր քյարից մեռավ:

Կուգյա Ծումոյին կասի. - Ծումո՛, ռեսի լաճ վեր մեր ծառին էր, ես քյար զարկիցի, ինգյավ տակ, մեռավ: Ծումո, ասսու սիրուն էլնի, արե ճարմ արա:

Ծումոն կասի. - Տուր իմ շլակս, տանեմ թալեմ:

Ծումոն կշլկի տանի, կտանի, կթալի գյետի մեչ: Ջեռլմ կաշի ոռեն կքյաշի:

Լյըլլընգյալեն կուգյա, կուգյա, կասի. - Մորքյու՛ր, ասեղմ տուր փուշս խանեմ:

Կխասպի մորքրոշ, ասեղ կառնի մոտեն, կտանի էտա կաշին գյախտիկ կկարի վեր մորքյրոջ շարդներաց:

Ռեսն կասի. - Ջա՛նմ, էսա տաս տսնխինգյ օր ի, իմ տղեն չէրևա, պիտի էլնեմ էսա գյեղական ժողվեմ, խենքյ ո՞վ իմ տղի սալախ կուտս:

Գյեղական բյություն կժողվոտվեն, կէրթան ռեսի տուն: Կուլան, կմռմռան, մարթ սալախ չի տա:

Ծումոն տանսից կվազի, կուգյա վեր էրթսին, կասի. - Է՜յ, վո՞վ արեր ի, վո՞վ չարեր ի, կաշին վեր ոռին կարուկ ի:

Ռես կասի. - Սուս կացեք, աստծու սիրուն, գյեռ Ծումոն կասի՝ վով արե, վո՛վ չարե, կաշին վեր ոռին ի կարե:

Կէլնեն էնտեղ էլած մարթ-կնգյան մեջ մեկ կխանեն տյուս, կտիսնան. որ Ծումոյի մորքյրոջ շարիդներաց վերեն կարուկ ի կաշին:

Ծումոյի մորքյրոջ գյլոխ ի՞նչ կխանեն, ի՞նչ չեն խաներ. չեմ կիտե:

Ծումոն էնտեղից կթողնի կփախնի: Կէրթա մեջ խատ պանցր քյարիմ. սարիմ ռաստ կուգյա:

Քյամայ կզննի ճեռչ քյարիմ, քյար կշլկի կնստի, կարմիր ծիյավորմ էն տեխեն կուգյա:

Կասի. - Վա՜խ, աստծու սիրուն էլնի, էսա իրեյն տո՞րի ի, ես ծարավ էսա տեղ նստեր եմ, էլնեմ էրթամ ճյուր խմեմ՝ քյար կուգյա վերես, մնացեր եմ քյարի տակ ծարավ: Մարթմ չկա վառցկոց խամար, գյո քյամայ տա էսա քյարին, ես էրթամ ճյուր խմեմ:

Ծիյավորն ի, կասի. - Որ ես գյամ քյամայ տամ էտա քյարին, տյու կէրթա՞ս ճյուր խմես գյաս:

Ծումոն կասի. - Գյեռ, գյեռ ըսկո եի, կէրթամ գյետ շուտմ ճյուր խմեմ գյամ:

Մարթն ծիյուց կեժնի տակ, կուգյա քյամայ կզննի քյարին: Ծիյավորն որ կէժնի տակ, Ծումոն կասի. - Աստծու սիրուն, կայեմ կաց, քյար կուգյա վերետ:

Ծումոն կէլնի թռնի ծիյու քյամայ, փախնի:

Մարթն կասի. - Աստծու սիրուն էլնի, տյու դեո՞ր առիր իմ ծին փախար, արե եէ:

Ծումոն կառնի ծին կփախնի, մարթն կայիմ կնստի քյարի տակ:

Ծումոն շատ կէրթա, քիչ կէրթա, կտեսնա, որ մարթմ չորս խատ եզ առե, վիցկի կանի մեջ արտին:

Կասի. - Վիցկի առող մարթ, որ տյու էրթաս պուտուկմ ապուր պիրես. ես ուտեմ. էսա ծին կուտամ քյե:

Մարթն կէլնի կէրթա տուն՝ ապուր ւգիրելու, էն վիցկին կտնգյի ւգանցր կուտոփմ կու կտնի վերեն, կառնի չորս եզ, խե ծիյուն կէրթա:

Կէրթա տիսնա խովիվմ խարիր խատ ոչխար տվե դեմ՝ կարածա:

Կասի. - Խովի՛վ. կիրիշկեմ. տյու թամամ շնեղ ես, էսա ի՞նչխ ի որ քյե բեղ չկա:

Խովիվն ի. կասի. - Վայլա՛ աղա, ես էլ բեղի մառախլի եմ, նէլէ գյեռ զի բեղ չի գյա:

Կասի. - Տղա՛, էլի քյիչմ փոս փորի ըստեղ, մտի մեջ փոսին, քյե բեղ պյուսցուցեմ:

Խովիվ կավատա, փոսմ կփորի, կմտնի մեջ, Ծումոն խովվին կծածկի, խովիվ կմնա փոսի տակ, կառնի կարմիր ծին, էդա չորս եզ, ինան խարիր ոչխար, կառնի, կէրթա դողրի խոր տուն:

Տոտ կթփի, խեր կուգյա, տոտ կւզննա:

Կասի. - Աղա՛, ես որ քյե տեգ եմ վառե, քյե կով եմ մորթե, էսա ոչխարն, ծին, եզներ կոսռամ էն վնասի տեղ, էլմ տյու՝ զի խեր, ես քյե՝ տղա:

Իռոնքյ կէլնեն խեր-տղա, կնստեն:

Տառնանքյ տեխ էտա ծիյավոր, որ մնացե քյարի տակ:

Կասի. - Ջա՛նմ, ես չում եփ պիտի մնամ էսա քյարի տակ:

Կէլնի քյարի տկեն, մեկ-էրկու արտաքոյ կփախնի, կայնե կիրիշկի, կտեսնա, որ քյար տեղեն իրար չառնե:

Կասի. - Վա՜խ, էս ի՞նչ էր արիցի վեր զի, իմ ծին իմ ծեռնեն կնաց:

Կէլնի ծեռ ծոց, իր ծիյան ոտաց խետ. կիրիշկի. կքյելի. կուգյա կտիսնա, որ մարթմ պռատյմ ապուր առե նստե կիրիշկե տեխ երկինքյ:

Կասի. - Ախպե՛ր, ըն՞չի՞ ես նստե, կիշկես տեխ երկինքյ:

Կասի. - Կարմիր ծիավորմ էկավ, զիկ ասաց՝ պուտույմ ապուր պե, ես ուտեմ, ծին տամ քյե: Չում ես կնցնցի ապուր պիրեցի, եզներ խանե երկինքյ. ալա չէճե տակ. չես ավատա, տես եզներ երկնուց կացեր են, կատոփմ էլ ինգյե վեր լիցկու գյլխուն:

Ծիյու տեր կասի. - Աստված քյո տուն ավիրի, էդա մարթ էն վողիեն իմ գյլեոխն էլ ի խաղցե: Էն ծին որ կեր՝ իմ ծին էր: Պե էդա ապուր ես տյու ուտենքյ, էլնենքյ, էրթանքյ մեր մալի իտև կան գանքյ:

Ապուր կուտեն, կպոծնեն. կէլնեն եզնն տեր. ծիյու տեր մեյ տեղ խետ եզներաց, ծիյու տավսին կուզյան: Կտիսնան. որ գյետնի տկանց մեյ խատ տքոց կուզյն: Կասեն. - Ախպեր, տյու վո՞վ ես, կտքաս էդատեղ:

Կասի. - Ես խեղճ խովիվմ եմ. աստծու սիրուն էլնի, զիկ ազատեքյ էսա տեղից: Գյետին կքյակեն, խովիվ կխանեն տյուս:

Կասեն. - Խովի՛վ, տյու ըն՞չի՞ եիր մտե էտա տեղ:

- Մեյ խատ մարթ, կարմիր ծին խեծուկ, չորս եզ խետն էկավ, զի խապեց ասեց՝ մտի գյետնի տակ, քյե բեղ կպյուսցուցեմ: Զի մտուց գյետնի տակ, ատեց իմ ոչխրներ փախավ:

Ծիյու տերն ի կասի. - Աստված քյո տուն ավիրի, էն վողիեն իմ գյլեոխն էլ սրա գյլեոխն էլի խանե, քյելե էրթանքյ:

Երեյքն մեյտրա կէլնեն ախպերագյիր կէրթան. Ծումոյի տուն խարցուցելով, փնդռելով կկնդնեն:

Տոտ կտփեն. Ծումոն կուզյն տոտն կպանա. կուրախնա վերիյքտեր, կասի. - Խազար պնրեով էկան իմ ախպերներ:

Կառնի ներս էդա իրեքյ մարթերն էլ, խաց կկերակրի, տեղ կշինի, քյնցուցի: Կասի. - Աստծու սիրուն էլնի, ախպերնե՛ր, ծե պնմ կթամխեմ, նեղացուկ մարթ եքյ, ճանկարծ մունջ ճյուր թնփել, մյուր թափել ծեր տակ չանեքյ, որ պատաճավ տյուք ճյուր թնփեցիքյ ծեր տակ, իմ խեր զըկ էլ ծեր խետ կմլի տյուս:

Մարթեր կասեն. - Յա՛, խո մենքյ տղա չե՞նքյ, ըդանն պնն կանե՞նքյ մեր տակ:

Մարթեր կինեն խորանթի քյնու մեչ, Ծումոն կէլնի պինդ տարեյնե խմոր կշինի, մեյ մկի տակ մեյ մեկ գյինդմ էդա խմորից կշինի տնի:

Մեյ խատ էլ էրկնքյի քյար թելն իսկե մոտեն. կախե տոնից:

Քյնուկ մարթերաց մեկն, միամիտ քյնու մեչ կշրճվի վեր էն մեկէլ կողին ու կինի մեչ էդա խմորին, էն էլ կիդի թե ինքյ ապականեր ի ուր տակ:

Էդա մեկ ինգըրոշ ծեն կուտա, կասի. - Աստծու սիրուն, էլե վեր ճարմ անենքյ:

Էն մարթ կանի որ շոճվի մեյտեխ, որ ճարմ անի վեր էդա ապականության, էն էլ կինի մեջ խմորին, կասի. - Տղա՛, էնա մեկէլ մարթուն ծեն տուր, թող էլնի վեր մե տեղեր ճարմ անի:

Կտեսնան, որ էն էլ ուրն ւապականե: Մեյ մկու կասեն. - Տղեյնե՛ր, էլեքյ փախեքյ մունջ էսա տեղեն, քյանի կիշեր ի, մարթ մե չտեսնա:

Կէլնեն իրեյն էլ իտև մեյմկու կփախնեն ուրենց ամոթյու: Մութ-մութ, որ կէլնեն ճայգներ կզննեն տոան վիրվի էրկնքյի քյարին, իրեյքյն էլ կմեռնեն:

Մալն էլ. ոչխարն էլ, ծին էլ կմնան Ծումոյին: Ծումոն կիշրաթթախ իրեքյին էլ կտանի կխորի, մեչեն կէլնի տյուս: